ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՄԱՐԶԸ	ԼՈՌԻ
ՀԱՄԱՅՆՔԸ	ԱԼԱՎԵՐԴԻ
ԲՆԱԿԱՎԱՅՐԸ	ԱՅԳԵՀԱՏ

1.ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Գյուղը հիմնադրվել է 1719 թվականին՝ Շահվերդյաններ տոհմի կողմից, որի տարածքում եղել է հին հեթանոսական բնակատեղի իր հին աղբյուրով, որ կոչվել է Բերդաշեն:

Հին բնակատեղիում է գտնվում նաև Սուրբ կիրակի մատուռը խաչքարով, որը կառուցվել է 4-ից 6-րդ դարերում: Գյուղը հարուստ է պատմամշակութային հուշարձաններով: Գյուղում 1979 թվականին կառուցվել է 1941-45թթ. Հայրենական մեծ պատերազմում զոհվածներին նվիրված հուշարձանային համալիրը, որտեղ դրված է նաև Արցախյան պատերազմում զոհվածներին նվիրված հուշաքար, եղեռնի զոհերին նվիրված հուշաքար, ինչպես նաև հարակից տարածքում է թաղված Սիմոն Զավարյանի (ՀՅԴ հիմնադիրներից) աճյունը:

Գյուղից քիչ հեռու ՝ ձորում, գտնվում է <<Քոբայրի>> վանական համալիրը, կարմիր խաչը, հին գերեզմանատեղիները :Մեր պապերը ձորից բարձրացել են այժմյան տարածք, որի համար ճանապարհ են բացել և այն անվանել <<Մուտ>> և որը գտնվում է <<Քարի գլուխ>> կոչվող տարածքում և անցնում է մատուռի կողքով : <<Քարի գլուխ>> կոչվող տարածքը մեր տեսարժան վայրերից մեկն է , որտեղից երևում է մեր ձորը իր ամբողջ հմայքով:Այնտեղից երևում է Դեբետ գետը, Դժվար / Զաթին դաղ/ լեռը, ինչպես նաև Քոբայրի վանքը, որոնք կարծես ափիդ մեջ լինեն: Այժմ շատ զբոսաշրջիկներ են գնում այդ մտով՝ տեսարժան վայրերով , մեր բնությամբ հիանալու:

1831թվականին գյուղն ունեցել է 88, 1886թ. - 337, 1922թ. - 500, 1959թ. - 391, 1970թ. - 366, 1979թ.- 295, իսկ ներկայում գյուղում հաշվառում ունի 288 մարդ: Բնակչության 20 տոկոսը գնում է արտագնա աշխատանքի: Սեռային կազմում գերակշռում են կանայք:

Գյուղատնտեսական հողերը բոլորը օգտագործվում են: Գյուղում զբաղվում են դաշտավարությամբ , մշակում են հացահատիկային , կերային, բանջարանոցային կուլտուրաներ: Զբաղվում են նաև խոշոր եղջերավոր անասունների բուծությամբ, մեղվաբուծությամբ, թռչնաբուծությամբ: Մինչև սեփականաշնորհումը և 2000-ական թվականները զբաղվում էին նաև այգեգործությամբ (ծիրան,խնձոր. տանձ, սալոր): Վերջին ժամանակները այգեգործությունը կանգ էր առել , սակայն գյուղում վերջին տարիներին ինտենսիվ այգեգործությունը զարգացնում է գործարար՝ գյուղի թոռ, Աղասի Զավարյանը:

Գյուղն ունի դպրոց, բուժկետ, կապի հանգույց (փոստ):

Գյուղը գազաֆիկացված է , ունի շուրջօրյա ջրամատակարարում, 2019 թվականին սուբվենցիոն ծրագրերով կառուցվել են խաղահրապարակ և ոռոգման համակարգ տնամերձերը մշակելու համար:

Գյուղը տվել է շատ անվանի մարդիկ, քաղաքական, պետական,հասարակական գործիչներ , բժիշկներ, զինվորականներ, դասախոսներ, ճարտարապետներ և այլն:Գյուղն ունեցել է իր պարային համույթը ազգային պարերով , որոնք առանձնացել են իրենց բնույթով; Համույթը իր աբողջ ժամանակաշրջանում մասնակցել է փառատոնների, մրցույթների , այլ միջոցառումների և շահել բազմաթիվ մրցանակներ ու շնորհակալագրեր, բարձր պահելով Շահվերդյանների անունն ու պատիվը:

Գյուղում է գտնվում Ամենայն Հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանի քրոջ տունը, ինչպես նաև աշուղ-երգահան Սայաթ - Նովայի կինը՝ Մարմարը, նույնպես Այգեհատից էր: Այն տունը ուր նրանք ապրել են, կիսավեր , խարխուլ վիճակում է և գտնվում է այլ սեփականատիրոջ ձեռքին:

Գյուղը ունի ֆուտբոլի դաշտ՝ դպրոցին կից, վոլեյբոլի դաշտ, ուր իրեց ազատ ժամանակն են անցկացնում գյուղի պատանիներն ու երիտասարդները:

2.ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Գյուղը գտնվում է Ալավերդի քաղաքից 14 կմ հարավ-արևմուտք, մարզկենտրոնից 55կմ հեռավորության վրա: Տեղակայված է Ալավերդի – Ստեփանավան ավտոմայրուղու վրա:

Գյուղը տեղադրված է Դեբետ գետի ձախ ափին , բարձրադիր սարավանդում՝ ծովի մակերևույթից 1150մ բարձրության վրա:

Նախկինում մտել է Թիֆլիս նահանգի Բորչալուի գավառի մեջ և ունեցել է Այգեհատ, Իգահատ, Իկհատ, Դանուշավան անվանումները : Այգեհատ վերանվանվել է 03.04.1991 թվականին: Գյուղն իր անվանում ստացել է այն պատճառով , որ շրջակայքում այգիները վերջացել են, հատվել (այգին –դա խաղողի մասին է խոսքը):

Դանուշավան անվանվել է ի պատիվ համագյուղացի քաղաքական ,պետական, հասարակական գործիչ Դանուշ Շահվերդյանի , որի շնորհիվ էլ Կոմիտասի աճյունը բերվել է Հայաստան և որի պատճառով 1937թ. ռեպրեսիայի զոհ դարձավ:

3.ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Կլիման մերձարևադարձային է, չափավոր շոգ և չորային ամառներով , մեղմ ձմեռներով: Տարեկան թափվում են 500-600մմ մթնոլորտային տեղումներ, սակայն վերջին տարիներին մթնոլորտային տեղումները բավականին պակասել են: Ագրոկլիմայական տեսակետից ընկած է ինտենսիվ ոռոգման գոտում:Գյուղում հիմականում լինում են սելավներ , քամիներ, երաշտ, կարկուտ, սակայն կարկտահարությունից պաշտպանվելու համար կա հեռակառավարվող կարկտակայան, իսկ ոռոգման համար կառուցվել է ոռոգման համակարգ: Սակայն դեռ հնարավոր չի ոռոգել ամբողջ հողատարածքը:Այս ուղղությամբ կատարվում են աշխատանքներ:

4.ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Նախկին (ՀԽՍՀ) վարչական շրջանի անվանումը	Թումանյան
2. Բնակավայրի հեռավորությունը՝	
2.1) համայնքի կենտրոնից (կմ)	14
2.2) մայրաքաղաքից (կմ)	180
2.3) մարզկենտրոնից (կմ)	55
2.4) պետական սահմանից ուղիղ գծով (կմ)	35
2.5) նախկին շրջկենտրոնից (կմ)	14
2.6) միջպետական նշանակության ավտոճանապարհից (կմ)	9
2.6) մոտակա երկաթուղային կայարանից (կմ)	9
4. Բնակավայրի բարձրությունը ծովի մակերևույթից (մ)	1165
5. Բնակավայրի վարչական տարածքը (քառ. կմ/հա)	14.30/1430,83
6 . Սահմանակից համայնքների և/կամ բնակավայրերի անվանումները	Օձուն, Ծաթեր, Թումանյան

7. Բնակավայրի վարչական ղեկավարի հեռախոսահամարը	099831866
8. Բնակավայրում փոստային բաժանմունքի առկայությունը (այո, ոչ), քանակը	Այո, 1
9.Հաստատված գլխավոր հատակագծի առկայությունը (այո, ոչ)	ոչ
10. Քաղաքացիների սպասարկման գրասենյակի առկայությունը (այո, ոչ)	ոչ

5.ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ, ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄԸ

	2025թ.
1. Մշտական բնակչության թվաքանակը	148
2. Գրանցված ծնունդների քանակը	0
2.Մահացության դեպքերի քանակը	4
3.Ամուսնությունների քանակը	0
4. Ամուսնալուծությունների քանակը	0
5. Տնային տնտեսությունների թիվը	69
6. Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների քանակը	7
7. Կենսաթոշակառուների քանակը	65
8. Հաշմանդամություն ունեցող անձանց քանակը	15

6.ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԿՐԹԱԿԱՆ, ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	01.01.2025թ.
1. Գրադարանների քանակը	0
2. Արվեստի դպրոցների քանակը	0
3. Երաժշտական դպրոցների քանակը	0
4. Նախադպրոցական հիմնարկների քանակը	0
5. Հանրակրթական դպրոցների քանակը	1
6. Նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունների քանակը	0
7. Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների քանակը	0
8. Բարձրագույն ուսումնական հաստատությունների քանակը	0
9. Մարզադպրոցների քանակը	0

7.ԲՆԱԿԵԼԻ ՖՈՆԴ

	01.01.2025թ.
1. Բնակավայրի բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը (մ^2)	8888
2. Բազմաբնակարան շենքերի ընդհանուր թիվը	0
3. Բնակելի տների (առանձնատների) ընդհանուր թիվը	146

8.ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	01.01.2025թ.
1. Գյուղատնտեսական նշանակության հողեր (հա)	529,4
2. Բնակավայրերի հողեր (հա)	43,1
3. Արդյունաբերական, ընդերք օգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների	5,9
4. Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյետներ	8,59
5. Հատուկ նշանակության	0
6. Հատուկ պահպանվող տարածքների	12,23
7. Անտառային	814,8
8. Ջրային	4,02
9.Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը	186
10. Մանր եղջերավոր անասունների (ոչխար և այծ) գլխաքանակը	20
11. Խոզերի գլուխաքանակը	93
12. Գյուղատնտեսական տեխնիկա	40
12.1 տրակտորներ (քանակը)	17
12.2 կոմբայններ (քանակը)	2
13. Գյուղացիական տնտեսությունների թիվը	69

9.ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

1. Էլեկտրական ենթակայանների քանակը	3
2. Բնակավայրի գազիֆիկացման առկայությունը (այո, ոչ)	Այո
3. Բնակավայրի աղբավայրի առկայությունը (այո, ոչ)	Ոչ
4. Բնակավայրում գերեզմանատան առկայությունը (այո, ոչ)	Այո
5. Ներբնակավայրային ճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	4,5
6. Կոմունալ և ճանապարհաշինական տեխնիկայի առկայությունը	ոչ
6.1 Ինքնաթափ բեռնատար մեքենաների քանակը	1
6.2 Էքսկավատորների քանակը	1
6.3 Թրթուրավոր տրակտորների քանակը	3
6.4 Գրեյդերների քանակը	0
6.5 Աղբատար մեքենաների քանակը	0
6.7 Բազմաֆունկցիոնալ կոմունալ մեքենաների քանակը	0
6.8 Վակումային փոշեկուլ մեքենաների քանակը	0
6.9 Ավտոաշտարակների քանակը	0
7. Բնակավայրի տարածքով անցնող միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	7
8. Բնակավայրի տարածքում գործող առևտրային բանկերի մասնաճյուղերի առկայությունը (այո, ոչ) և դրանց քանակը	Ոչ

9. Ներհամայնքային երթուղիների առկայությունը (այո, ոչ)	Ոչ
10. Ներբնակավայրային երթուղիների առկայությունը (այո, ոչ)	ոչ

10.ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

	01.01.2025թ.
1. Բնակավայրում համայնքապետարանի աշխատողների թվաքանակը, որից՝	3
1.1 համայնքային ծառայողներ	1
2. Բնակավայրի բնակիչ ավագանու անդամների թվաքանակը	0

11. ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հիմնախնդիրը (նկարագրությունը)	**Ակնկալվող լուծումը և լուծման ժամկետները**
Բնակավայրի չվերանորոգված ճանապարհներ	Ճանապարհների ասֆալտապատում. 3 տարի
Լուսավորություն ցանցի բացակայություն	Լուսավորության ցանցի անցկացում. 2025թ
Գյուղատնտեսական նշանակության հողերի մշակման հետ կապված դժվարություններ /գյուղտեխնիկա,սերմեր, պարարտանյութ,թունաքիմիկատներ/	Գյուղտեխնիկայի, սերմերի, պարարտանյութերի, թունաքիմիկատների տրաադրում
Գյուղ. վարկերի փոքր մատչելություն կամ անմատչելություն	Գյուղ. վարկերի տոկոսների վերանայում
Ոռոգման համակարգի բացակայություն	Ոռոգման ջրի համակարգի կառուցում. 1-2 տարի